Պարույր Սևակ

Ասել քեզ չեմ սիրում

Ասել քեզ չե՞մ սիրում... Ինչի՞ համար սակայն
Խենթանում եմ անգամ ես այն մտքից,
Թե կարող ես ինձնից դու հեռանալ հանկարծ,
Թե կարող ես սիրել ուրիշ մեկին:
Չե՞մ կարոտում ասել... Սակայն ինչո՞ւ, ինչո՞ւ
Գիշերային մի ուշ, մի խենթ պահի
Սիրտս աղոթքի պես անունդ է մրմնջում,
Կարոտում է ձեռքին քո փայփայիչ:
Չե՞մ ձանձրանում ասել... Բայց ինչո՞ւ է հանկարծ
Սիրտըս տենչում ինչ-որ հեռավորի,
Նրան, որ միգուցե ոչ եղել է, ոչ կա,
Նրանց, որ ցնորք է միայն թովիչ:
Ասել սիրո՞ւմ եմ քեզ... Սակայն ինչո՞ւ հաճախ
Ես տխրում եմ, թախծում միշտ անառիթ,
Դժգոհում եմ ինձնից՝ չունենալով պատճառ,
Նայում եմ քեզ, ժպտում բայց օտարին:
Հանելո՞ւկ է արդյոք, առեղծվա՞ծ է միթե...
Հասկանում եմ ես քեզ, սիրտ իմ խելառ.
-Երջանկությանն ես քո դու վարժվել արդեն
Եվ դժգոհ ես քեզնից միայն դրա համար...

1947թ.